



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար պարտականությունները կատարող Արամ Մեյմարյան



«29» 05 2026 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 069 - 26

Նախաձեռնող՝

«Դուստր-Մոնիկա» ՍՊԸ

Շիրակի մարզ, Ախուրյան բնակավայր, Գյումրիի խճ.37

Գործունեությունը՝

Ասֆալտի գործարանի տեղադրման և ասֆալտրեպոնի արտադրության կազմակերպում

Շիրակի մարզ, Ախուրյան համայնք

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 069 - 26

«29» Մայիսի 2026թ.

Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում ասֆալտի գործարանի տեղադրման և ասֆալտաբետոնի արտադրության կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Դուստր Մոնիկա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ախուրյան համայնք

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ Հաշվետվություն/ «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/իրեն սեփականության իրավունքով պատկանող արտադրական կառուցապատման հողամասում, նախատեսում է տեղադրել ստացիոնար «ԿՈՐԵՇ ԱՍ-160» մակնիշի պարսկական արտադրության ասֆալտի գործարան և իրականացնել ասֆալտաբետոնի արտադրություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի ե) ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Գյումրու խճուղի 37 հասցեում:

Տարածքի հեռավորությունն Ախուրյան բնակավայրի ամենամոտ բնակելի տարածքից կազմում է 0.771 կմ, Գյումրի քաղաքի երկաթգծի Նորավան թաղամասից՝ մոտ 0.55 կմ, Գյումրի քաղաքի Նորավան թաղամասից՝ 0.5 կմ, «Շիրակ» օդանավակայանից՝ 1.7 կմ, Գյումրու երկաթգծի կայարանից՝ 1.25 կմ, Ախուրյան գետից՝ 4.6 կմ: Այն ամիջապես գտնվում է Գյումրի-Ախուրյան ավտոճանապարհի աջակողմյան հատվածում: Տարածքի արևմտյան մասի ողջ երկայնքով անցնում է ոռոգման մայր ջրատարը: Մոտակա բնակավայրերն են՝ Գյումրի քաղաքը և Ախուրյան բնակավայրը:

Տարածքի ռելիեֆը սարահարթային է: Բացարձակ բարձրությունների նիշերը տատանվում են 1500-1700 սահմաններում: Ռելիեֆի ծագումնային տիպը կուտակումային է՝ ներկայացված լճաայուվիալ նստվածքներով և մասամբ հրաբխային է: Տեղամասի բուսականությունը տափաստանային է՝ ներկայացված կծմախոտային տափաստաններով, ինչպես նաև կուլտուրականացված ծառատեսակներով և թփերով:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1560-II կլիմայական գոտում, որտեղ հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 19.9°C է: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 38°C,



նվազագույն ջերմաստիճանը հասնում է -36°C -ի: Տարեկան տեղումների քանակը կազմում է 507 մմ:

Գործունեության տարածքը համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերում», ներառված է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզում և գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում:

Նախատեսվող գործունեության անմիջապես ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Նախատեսվող ասֆալտի գործարանի հողամասի մակերեսը 3.7263 հա է, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Տարածքը ցանկապատված է և մեկուսացված է բնակելի զանգվածից, այն նախատեսված է արտադրական գործունեության համար: Տարածքում առկա են պահակատուն, սանհանգույցներ, վերանորոգման տեղամաս, պահեստներ, բիտումի ռեզերվուարներ, մագուի տարողություններ, կառավարման կետ, լաբորատորիա, աշխատակիցների համար նախատեսված հանգստի սենյակ, ավտոտնակ և այլ շենք-շինություններ:

Համաձայն հաշվետվության՝ նախկինում տարածքը շահագործվել է որպես ասֆալտբետոնի արտադրական հանգույց, որը շուրջ երկու տարի առաջ ապամոնտաժվել է՝ արտադրական հզորությունների և տեխնիկական ոչ բավարար պարամետրերի պատճառով: Վերջին տարիների ընթացքում տվյալ հարթակում ասֆալտի արտադրություն չի իրականացվել:

Համաձայն նախագծի՝ գործարանի կառուցման համար հատուկ շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում, գործարանի կառուցման համար միայն անհրաժեշտ է լինելու ամուր հիմքի վրա կառուցված պատվանդաններ՝ պտտվող թմբուկային վառարանի, էլևատորի, խառնիչ աշտարակի և այլ կոնստրուկցիաների տեղադրման համար: Գործարանի մասերը տարածք են բերվելու առանձին տուփերում փաթեթավորված վիճակում:

Համաձայն կառուցապատման ժամանակացույցի՝ ասֆալտի գործարանի սարքավորումների տեղադրման աշխատանքները տևելու են 3 ամիս, 6-օրյա գրաֆիկով, աշխատանքներն իրականացվելու են 1 հերթափոխով, հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ: Բոլոր տիպի տեղադրման աշխատանքները կատարվելու են՝ պահպանելով անվտանգության կանոնները և ստանդարտները:

Հաշվետվությունում մանրամասն ներկայացված է ասֆալտի գործարանի տեղադրման աշխատանքները բոլոր փուլերով:

Ասֆալտի գործարանի սարքավորումների տեղադրման փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, այդ թվում՝ բեռնիչ, բեռնատարի վրա ամրացվող կոունկ՝ 3-5 տոննա և 50-80 տոննա բեռնամբարձունակությամբ, ինքնաթափ, բետոնախառնիչ, ջրցան մեքենա, շինարարական գործիքներ և սարքեր:

Համաձայն հաշվետվության՝ բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը հարթեցվելու է և ունենալու է 5° -ից ոչ ավել թեքություն: Շինտեխնիկական լինելու է ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում:



Ասֆալտի գործարանի արքավորումների տեղադրման փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար ջուրն օգտագործվելու է ընկերության տարածքում առկա ջրագծից:

Փոշենստեցման և ջրցանման աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական ջրի մատակարարումը նախատեսվում է իրականացնել ավտոցիստեռների միջոցով:

Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի:

Ասֆալտի գործարանի արքավորումների տեղադրման աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում գործարանի տարածքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար 6(10) կՎ և բարձր լարման ցանցից սնվող սպառող) պայմանագրի հիման վրա:

Գազաֆիկացումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված բնական գազի մատակարարման պայմանագրի համաձայն:

Հաշվետվությունում մանրամասն ներկայացված են արտադրական, խմելու, կենցաղային ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկները:

Ասֆալտի գործարանի տեղադրման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպճային աշխատանքներ և բետոնապատում: Ավտոճանապարհները, մոտեցումները խճապատվելու և ասֆալտապատվելու են:

Գործունեության արդյունքում նախատեսվում է կազմակերպել ասֆալտի արտադրություն՝ 120-160 տ/ժամ արտադրողականությամբ:

Շահագործման փուլում ավազը և խիճը տեսակավորված վիճակում գործարանի տարածք են բերվելու և պահեստավորվելու են բաց հարթակներում (պահեստում): Հանքային փոշին, որպես լրացուցիչ բաղադրիչ, բերվելու է հատուկ տրանսպորտային միջոցներով, և օդամղիչ համակարգով տեղափոխվելու է հերմետիկ սիլոսներ: Բիտումը պահվելու է հատուկ ջերմամեկուսացված բաքերում: Բիտումի հոսունությունն ապահովվելու համար այն մշտապես տաքացվելու է մինչև 150°C՝ բնական գազով աշխատող տաքացուցիչների միջոցով:

Խոնավ ավազը և խիճը պահեստից տեղափոխվելու են նախադրված բունկերներ, որտեղից փոխակրիչների միջոցով ուղղվելու են դեպի թմբուկային չորացման վառարան: Վառարանն աշխատելու է բնական գազով: Այս փուլում տեղի է ունենալու իներտ նյութերի խոնավազրկում և տաքացում՝ մինչև պահանջվող ջերմաստիճան: Չորացման և հետագա քարմաղման ընթացքում առաջացած փոշեգազային խառնուրդն անցնելու է երկաստիճան մաքրման համակարգով: Առաջնային մաքրումն իրականացվելու է ցիկլոնային փոշեորսիչով: Երկրորդային մաքրումն իրականացվելու է բարձր արդյունավետությամբ օժտված թևքային (պարկային) ֆիլտրերով: Մաքրման համակարգի ընդհանուր օգտակար գործողության գործակիցը կազմում է 99.5-99.9%: Որսված փոշին խողովակաշարերով տեղափոխվելու է համապատասխան սիլոսներ՝ արտադրության մեջ կրկնակի օգտագործման նպատակով: Մաքրված գազաօդային խառնուրդը, որը պարունակում է անօրգանական փոշու, ածխածնի օքսիդի (CO), ազոտի երկօքսիդի (NO2) և ածխաջրածինների մնացորդային քանակություններ, հեռացվելու է մթնոլորտ 11 մ բարձրության և 0.8 մ տրամագիծ ունեցող ծխատար խողովակով: Ելքային ջերմաստիճանը կազմում է 100°C-120°C:



Տաք իներտ նյութերը էլևատորով բարձրացվելու են քարմաղման հանգույց, որտեղ անջատվելու են խոշոր գնդիկները: Այնուհետև նյութերը (ընդհանուր ծավալի $\approx 88-90\%$ -ը) լցվելու են խառնիչ, որտեղ ավելացվելու են 6-7% բիտում և 4-5% հանքային փոշի:

Վերջնական խառնուրդը (պատրաստի ասֆալտը) կուտակվելու է աշտարակի վրա ներկառուցած պահեստային բունկերում, որտեղից բարձվելու է մեքենաները և առաքվելու է սպառողին:

Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվող ասֆալտբետոնի գործարանը համալրված է բազմաստիճան գազամաքման ժամանակակից համակարգով, որն ապահովում է փոշու և վնասակար նյութերի որսումը նախքան մթնոլորտ արտանետվելը:

- Առաջնային մաքրում (Ցիկլոնային համակարգ). Չորացման թմբուկից դուրս եկող գազափոշային խառնուրդը նախ անցնում է ցիկլոնային որսիչի միջով, որտեղ իներցիոն ուժի ազդեցությամբ անջատվում են փոշու խոշոր մասնիկները (ավելի քան 75 մկմ): Այս փուլում որսված փոշին անմիջապես հետ է վերադարձվում արտադրական պրոցես:

- Երկրորդային/Նուրբ մաքրում (պարկային ֆիլտրեր), որը գործարանի հիմնական մաքրման հանգույցն է: Օդը մղվում է հատուկ ջերմակայուն գործվածքից պատրաստված պարկերի միջով: Մաքրման այս եղանակի արդյունավետությունը կազմում է 99.0-99.5%:

Այն թույլ է տալիս որսալ նույնիսկ ամենամանր մասնիկները:

- Թևքային գտիչները յուրաքանչյուր 15 րոպեն մեկ ինքնամաքրվում են՝ թրթռման միջոցով: Կուտակված փոշին վերադարձվում է արտադրություն:

Յուրաքանչյուր աշխատանքային հերթափոխից առաջ և հետո իրականացվելու է պարկային գտիչների (ֆիլտրերի) վիճակի տեսողական և գործիքային ստուգում:

Համակարգում ճնշման անկման կամ գտիչների ամբողջականության խաթարման (պատռվածքներ, մաշվածություն) նույնիսկ չնչին դեպքերի հայտնաբերման պարագայում՝ արտադրական պրոցեսը անմիջապես կասեցվելու է, իսկ վնասված գտիչները՝ փոխարինվելու են:

Համաձայն Հաշվետվության՝ անկախ գտիչների ընթացիկ վիճակից և մաշվածության աստիճանից, նախատեսվում է իրականացնել գտիչ պարկերի ամբողջական պլանային փոխարինում նորերով՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ (տարեկան 4 անգամ):

Ասֆալտի գործարանի աշխատանքային ռեժիմն ընտրվել է՝ ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Գործարանի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում 260 օր է, շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 6 օր, հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ, հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ:

Շահագործման փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են՝ 1 ավտոինքնաթափ, բուլդոզեր, էքսկավատոր՝ 0,5 մ³ շերտփով, 2 բարձիչ, եռակցող ապարատ և էլեկտրական այլ գործիքներ:

Տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով: Տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է արտադրական տարածքից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Ընկերությունը, հիմնվելով գործարանի առավելագույն արտադրողականության վրա, ասֆալտբետոնե խառնուրդի արտադրության համար որպես հումք նախատեսում է օգտագործել հետևյալ տարեկան քանակները՝

- խիճ՝ 252 600 տ/տարի,
- ավազ՝ 47 400 տ/տարի,



- հանքային փոշի՝ 13 000 տ/տարի,
- բիտում՝ 20 000 տ/տարի,
- բնական գազ՝ 1 160 հազ. մ³/տարի:

Ասֆալտբետոնի արտադրության ընթացքում մթնոլորտային արտանետումները պայմանավորված են հետևյալ տեխնոլոգիական գործընթացներով՝

- իներտ հումքի (ավազ, խիճ) բեռնաթափում և պահեստավորում բաց հարթակներում;
- ավազի և խճի տեղափոխում դեպի նախադոզավորման բունկերներ և չորացման թմբուկային վառարանի բեռնում,
- իներտ նյութերի տաքացում և չորացում (բնական գազի այրմամբ),
- չորացված իներտ նյութերի քարմաղում (ըստ ֆրակցիաների դասակարգում),
- ավազի, խճի և հանքային փոշու ճշգրիտ դոզավորում,
- տաքացված բիտումի մատուցում և դոզավորում (բիտումի հոսունությունն ապահովվում է գազային այրիչներով համալրված ջեռուցման համակարգով, պահպանումը՝ հերմետիկ տարողություններում),
- բաղադրիչների (իններտ նյութեր, հանքային փոշի և բիտում) խառնում խառնիչ հանգույցում,
- պատրաստի արտադրանքի բեռնաթափում կուտակիչ բունկեր կամ տրանսպորտային միջոցներ:

Ըստ արտանետման աղբյուրների դիրքային սխեմայի՝ դիտարկվելու են արտանետման 4 հիմնական աղբյուր: Գործարանի շահագործման ընթացքում առաջանալու են անօրգանական փոշու, ածխածնի օքսիդի (CO), ազոտի օքսիդների (NOx), ծծմբի երկօքսիդի (SO2) և ածխաջրածինների արտանետումներ՝ հետևյալ տեղամասերից.


1. հումքի պահեստ (արտանետման աղբյուր N1 - անկազմակերպ հարթակային),
2. նախադոզավորման բունկերներ, կշեռքներ և փոխակրիչներ (արտանետման աղբյուր N2-անկազմակերպ),
3. չորացման և խառնման հանգույց (խողովակ) (արտանետման աղբյուր N3-կազմակերպված),
4. բիտումի պահեստավորման և ջեռուցման տեղամաս (արտանետման աղբյուր N4 - անկազմակերպ):

Արտանետման հիմնական աղբյուրն են.

- իներտ նյութերի (ավազ, խիճ) բաց պահեստները՝ 3 հատ,
- նախադոզավորման բունկերները՝ 5 հատ 50 մ³ (յուրաքանչյուրը՝ 10 մ³),
- կշեռք-փոխակրիչները՝ 5 հատ,
- ասֆալտի պատրաստման հանգույցը՝ 1 հատ,
- հանքային փոշու սիլոսը՝ 1 հատ,
- բիտումի աշխատանքային և պահուստային տեղամասը՝ 1 հատ:

Համաձայն Հաշվետվության՝ ասֆալտբետոնե խառնուրդի արտադրության գործընթացում վնասակար նյութերի արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդում գնահատելու նպատակով, կատարվել են «ԷՌԱ» ծրագրով ցրման հաշվարկներ, որոնց արդյունքները համեմատվել են գոյություն ունեցող սանիտարական թույլատրելի նորմերի հետ:

Աղտոտող նյութը	Գետնամերձ կոնցենտրացիաները	
	ՍԹԿ մասով	մգ/մ ³
Փոշի անօրգանական (SiO ₂ – 70-20%)	0.3114386	0.0934316
Ածխածնի օքսիդ	-	-
Ազոտի օքսիդներ (երկօքսիդ հաշվարկով)	0.1687014	0.0337403
Ածխաջրածիններ	0.0538288	0.00538288



Մուր	-	-
Անհիդրիդ ծծմբային	0.0622185	0.0311092
Ազոտի օքսիդ+Անհիդրիդ ծծմբային	0.1441885	

Արտանետումների ցրման հաշվարկերի արդյունքում, սպասվող գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմերի 12-րդ կետի «120. Շինարարական արդյունաբերություն» ենթակետի, «բ. ասֆալտբետոնի արտադրություն (բացառությամբ շարժական գործարաններում/կայանքներում ասֆալտբետոնի արտադրության, որոնք նախատեսված են տրանսպորտային ենթակառուցվածքի գծային օբյեկտների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման նախագծային փաստաթղթերով)» գործարանի համար սանիտարապաշտպանական գոտու կողմնորոշիչ չափը սահմանվում է 500 մետր (II դաս), ինչն ապահովված է:

Գործունեության ընթացքում առաջանալու են արտադրական և կենցաղային թափոններ՝ բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, բանեցված շարժիչների յուղերի թափոններ, իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ, հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսֆորմատորային յուղերի մնացորդներ, գտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ և այլն, որոնք հավաքվելու են առանձին տարաների մեջ և հանձնվելու են վերամշակման կետերի և կազմակերպությունների:

Ասֆալտբետոնի գործարանի հանգույցների ընթացիկ վերանորոգման, մաշված դետալների, պահեստամասերի և ամրակների փոխարինման արդյունքում առաջացած չաղտոտված սև մետաղների մնացուկները կուտակվելու են գործարանի տարածքում առանձնացված հարթակում և ըստ քանակի կուտակման (տարեկան առնվազն մեկ անգամ) հանձնվելու է մետաղական ջարդոնի ընդունման կետեր՝ վերամշակման նպատակով:

Ինչպես նաև գործունեության արդյունքում առաջանալու են կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ինչը կուտակվելու է 2 հատ 1.5 x 1.0 մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ և պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ասֆալտի գործարանի տեղադրման և արտադրության փուլերում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- սարքավորումների տեղադրման աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շինարարական նյութերի մնացորդները (մետաղական մասեր) և վտանգավոր թափոնները հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացնել տարածքից,
- գործարանի տեղադրման և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքել տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխել նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,
- բացառել աղբի կուտակումը շփիրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում:



Վտանգավոր թափոնների (բանեցված յուղեր, կուտակիչներ, գտիչներ) ժամանակավոր

պահման համար տարածքում նախատեսվելու է հատուկ կահավորված, բետոնապատ հատակով և ծածկով հարթակ՝ բացառելով տեղումների ներթափանցումը և հնարավոր արտահոսքերը դեպի շրջակա միջավայր:

Հաշվի առնելով, որ ամենամոտ բնակելի գոտին գտնվում է գործարանի տարածքից 500 մետր հեռավորության վրա, կատարվել է ձայնային ալիքի մարման հաշվարկ: Ըստ հաշվարկի՝ բնակելի գոտու սահմանագծին գումարային աղմուկի մակարդակը կկազմի մոտ 38 դԲԱ, ինչը ցածր է բնակելի և հասարակական շենքերի մոտ ցերեկային ժամերի համար սահմանված 55 դԲԱ թույլատրելի նորմից (նույնիսկ ցածր է գիշերային 45 դԲԱ նորմից):

Հաշվետվությունում ներկայացվել է անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման, ինչպես նաև հնարավոր տեխնածին և արտակարգ իրավիճակներ և դրանք մեղմող միջոցառումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում իրականացվել է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր տեխնածին ազդեցությունների համալիր վերլուծություն: Ազդեցությունների գնահատումը կատարվել է՝ հաշվի առնելով դրանց տեսակը, բնույթը, ինտենսիվությունը և տարածման ծավալները:

Գնահատման հաշվետվությունում նախատեսվում է շինարարության փուլում օդային ավազանն աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում):

Շահագործման փուլում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.

- ապահովել ասֆալտի գործարանի փոշեորսման համակարգերի՝ ցիկլոնների և թևքային (պարկային) ֆիլտրերի անխափան աշխատանքը, բացառել գործարանի շահագործումն առանց մաքրման համակարգերի կամ դրանց անսարքության դեպքում,
- իրականացնել թևքային գտիչների պարբերական փոխարինում և ցիկլոնների մաքրում՝ համաձայն տեխնիկական անձնագրի պահանջների՝ ապահովելով փոշեորսման սահմանված բարձր արդյունավետությունը (մինչև 99%),
- պարբերաբար ստուգել և վերահսկել արտանետման աղբյուրների հերմետիկությունը, թրթռամաղերի և դոզատորների սարքինությունը՝ բացառելով փոշու անկազմակերպ արտանետումները,
- հումքի (խիճ, ավազ) պահեստավորման տարածքներում և ներհամայնքային տրանսպորտային ուղիներում չոր և քամոտ եղանակներին իրականացնել պարբերաբար ջրցանում,
- ուժեղ քամիների կամ ասպ ազդանշանների դեպքում ժամանակավորապես դադարեցնել սորուն նյութերի հետ կապված աշխատանքները կամ կրճատել արտադրության ծավալները,
- բացառել անսարք, արտանետումների նորմերը գերազանցող մեքենաների օգտագործումը: Սորուն նյութերի տեղափոխումը կատարել բացառապես փակ ծածկոցներով կամ անջրթափանց թաղանթով,
- խստիվ բացառել ցանկացած տեսակի թափոնների այրումն արտադրական տարածքում,



- օգտագործել միայն որակյալ դիզելային վառելիք՝ նվազեցնելու համար այրման արգասիքների (ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդներ) քանակը:

Հողային ռեսուրսների աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- բիոտոմի պահեստարանները և վառելիքի բաքերը տեղադրել բացառապես անջրթափանց (բետոնապատ) հիմքերի վրա, որոնք ունեն հակաարտահոսքային եզրաշերտեր (բորոյուրներ)՝ վթարային թափումների դեպքում հողի հետ շփումը բացառելու համար,
- հեղուկ թափոնների (օգտագործված յուղեր) ժամանակավոր պահման վայրերն ապահովել հերմետիկ տարաներով և արտահոսքը կանխող/մաքրող նյութերով (ավազ, սորբենտներ),
- խստիվ բացառել տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը գործարանի հարակից հողային տարածքներում՝ դրանք իրականացնել միայն մասնագիտացված կետերում,
- հումքի (խիճ, ավազ) կույտերը պահել սահմանազատված հարթակներում՝ կանխելով դրանց տարածումը հարակից հողատարածքների վրա,
- նվազագույնի հասցնել տարածքում պահվող նյութերի և թափոնների քանակը, ապահովել դրանց օպերատիվ հեռացումը:

Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.

- փոշենստեցման նպատակով ջրցանումը կատարել չափավոր՝ ըստ անհրաժեշտության, բացառելով ավելցուկային ջրերի կուտակումը և մակերևութային հոսքերի առաջացումը դեպի հարակից հողատարածքներ,
- պարբերաբար վերահսկել բիոտոմի և վառելիքի պահեստային բաքերի շուրջ առկա բետոնե պատնեշների (ամբարտակման համակարգի) ամբողջականությունը: Ապահովել, որ վթարային արտահոսքի դեպքում հեղուկը չթափանցի գրունտային ջրերի մեջ,
- կազմակերպել բաց տարածքից անձրևաջրերի հեռացումը հատուկ առվակների կամ ջրահեռացման համակարգի միջոցով՝ բացառելով դրանց աղտոտումը տեխնոլոգիական հումքով կամ թափոններով,
- խստիվ բացառել տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը կամ յուղերի փոխումը գործարանի տարածքում: Բոլոր սպասարկման աշխատանքներն իրականացնել միայն մասնագիտացված կետերում,
- աշխատողների կողմից առաջացող կենցաղային կեղտաջրերի հեռացումն իրականացնել տարածքում առկա կոյուղու համակարգի միջոցով՝ բացառելով բաց արտահոսքերը:

Գործունեության ընթացքում թափոնների արդյունավետ կառավարման նպատակով նախատեսվում է.

- փոշեորսիչ համակարգերում (թևքային ֆիլտրեր, ցիկլոններ) հավաքված հանքային փոշին ամբողջությամբ վերադարձնել արտադրական ցիկլ՝ որպես լրացուցիչ հումք: Սա կապահովի անթափոն արտադրական գործընթաց և կկանխի փոշու կուտակումը տարածքում,
- գործարանի սպասարկումից առաջացած վտանգավոր թափոնները (օգտագործված յուղեր, յուղոտված զտիչներ և լաթեր) պահել հերմետիկ տարաներում՝ հատուկ կահավորված (բետոնապատ, ծածկ ունեցող) հարթակում և այլմասնագրային հիմունքներով հանձնել լիցենզավորված կազմակերպությունների,
- աշխատողների կողմից առաջացող կենցաղային աղբը հավաքել կահարիչով աղբամաններում և հեռացնել համայնքի հետ կնքված աղբահանության պայմանագրի համաձայն:



Արտադրության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- գործարանի շահագործումը և տրանսպորտային միջոցների ակտիվ տեղաշարժը կազմակերպել բացառապես ցերեկային ժամերին՝ բացառելով գիշերային ժամերին հարակից բնակելի տարածքների անդորրի խաթարումը,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել ասֆալտի գործարանի թրթռամաղերը, դոզատորները և էլեկտրաշարժիչները՝ բացառելով անսարքությունների պատճառով առաջացող հավելյալ աղմուկը և վիբրացիան և այլն:

Գործունեության ընթացքում արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- արտադրատարածքն ապահովել առաջնային հրդեհաշիջման միջոցներով (կրակմարիչներ, ավազով արկղեր), հակահրդեհային վահանակներով և ջրի պահեստային բաքով, պարբերաբար ստուգել կրակմարիչների լիցքավորումը և պիտանելիության ժամկետները,
- տարածքը կահավորել շանթարգելներով, շուրջօրյա տեսահսկման համակարգով և ձայնային/լուսային ազդանշանային սարքերով՝ վթարային իրավիճակների մասին անհապաղ իրազեկման համար,
- խստիվ արգելել բաց կրակի օգտագործումը բիտումի և վառելիքի պահեստարանների մոտ, տարածքը պարբերաբար մաքրել հրդեհավտանգ թափոններից (յուղոտված լաթեր, չոր բուսականություն, փայտի մնացորդներ) և այլն:

Ասֆալտի գործարանի տեղադրման աշխատանքների և շահագործման փուլի ողջ ընթացքում իրականացվելու է տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների (կրծողներ, սողուններ, թռչուններ) վիճակի տեսողական մոնիթորինգ: Վայրի կենդանիների հայտնաբերման դեպքում բացառել դրանց միտումնավոր վնասումը կամ անհանգստացումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջների՝

- բացառել աշխատանքների իրականացումը հատկացված տարածքի սահմաններից դուրս՝ չվնասելով հարակից բնական բուսածածկույթը,
- անհրաժեշտության դեպքում (նոր տեսակների հայտնաբերման դեպքում) իրականացնել աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի հստակեցում և քարտեզագրում:

Հաշվետվությունում ներառված է գրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվող ասֆալտի գործարանի շահագործման հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում: Արտադրամասը շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում ներկայացվել են օբյեկտի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն,



